ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 421

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Աշտարակ քաղաքի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Աշտարակ քաղաքի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-001-0422-0027 կադաստրային ծածկագրով 0.003 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր	02-001-0422-0027 կադաստրային ծածկագրով 0.003 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աշտարակ քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, « 26 » «դեկտեմբերի» 2025 թ.